Տուլարեմիա

Տուլարեմիան շատ լուրջ հիվանդություն է: Այն առաջանում է բակտերիայից, որը երբեմն գոյություն ունի առնետների, ճագարների և այլ վայրի կենդանիների մեջ:

Ինչպե՞ս ես կարող եմ վարակվել տուլարեմիայով:

Դուք կարող եք վարակվել տուլարեմիայով եթե.

- Գործ ունենաք սատկած կենդանիների հետ, որոնք վարակված են:
- Վարակված տիզ, ձիաճանճ կամ այլ միջատ Ձեզ կծի,
- Ուտեք կամ խմեք թունավորված ուտելիք կամ ջուր, կամ
- Շնչեք այն բակտերիան, որն առաջացնում է տուլարեմիա:

Արդյո՞ք տուլարեմիան վտանգավոր է:

Այո: Դուք պետք է բուժվեք հատուկ անտիբիոտիկներով ***անմիջապես***, այլապես կարող եք մահանալ: Անտիբիոտիկներ ընդունելով Դուք հավանաբար կապաքինվեք:

Որո՞նք են տուլարեմիայի ախտանշանները:

Առաջին ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս 3-5 օրվա ընթացքում.

- հանկարծակի ջերմություն, դող
- այտուցված, ցավոտ գեղձեր
- գլխացավ
- լուծ
- մկանային և հոդային ցավեր
- չոր հազ
- թուլություն

Այլ ախտանշանները կախված են այն բանից, թե Դուք ինչ ձևով եք վարակվել: Հնարավոր է, որ Դուք ունենաք թարախոտ վերքեր Ձեր մաշկի կամ բերանի վրա, կոկորդի ցավ, ուռածություն կամ ցավ Ձեր աչքերում, պարանոցի գեղձերում, թևատակերի կամ աճուկների շրջանում:

Հետագայում Դուք կարող է ունենաք թոքերի բորբոքում, շնչարգելություն, ցավ կրծքավանդակի շրջանում և արյունախառը լորձով հազ: Որոշ մարդիկ դադարում են շնչել և մահանում են:

Արդյո՞ք տուլարեմիան վարակիչ է:

Ոչ: Դուք չեք կարող տուլարեմիա ստանալ մեկ ուրիշ անձից:

Արդյո՞ք պատվաստանյութ գոյություն ունի:

Ոչ:

Ի՞նչ անել, եթե կարծում եմ որ վարակվել եմ տուլարեմիայով:

Հեռաձայնեցեք Ձեր բժշկին կամ հիվանդանոց ***անմիջապե՛ս***:

Ինչպե՞ս ես կարող եմ կանխել վարակը:

Դուք կարող եք.

- Կանխել միջատների կծելը.
  - Օգտագործեք միջատներին վանող դեղամիջոց (որը պարունակում է դիեթիլ պոլուամիդ-DEET) Ձեր մաշկի վրա:
  - Ձեր հագուստի վրա փչեցեք միջատներին վանող դեղամիջոց,
- որը պարունակում է պերմետրին:
- Հաճախ լվացեք Ձեր ձեռքերը օճառով և գոլ ջրով, հատկապես սատկած կենդանիների հետ գործ ունենալուց հետո:
- Միշտ բծախնդրորեն եփեցեք Ձեր կերակուրը:
- Համոզվեցեք, որ Ձեր ջուրն ապահով աղբյուրից է:

Հեռաձայնեցեք Ձեր անասնաբույժին, եթե Ձեր անասունները կամ ընտանի կենդանիները, (հատկապես ճագարները, առնետները և այլ կրծողները), սկսեն ունենալ անսովոր ախտանշաններ, որոնցից են ջերմություն, քաշի կորուստ, այտուցված գեղձեր, թարախային վերքեր և այլն...

Կարո՞ղ են ահաբեկիչները օգտագործել տուլարեմիան որպես զենք:

Դա հնարավոր է, բայց շատ դժվար կլինի օդում արձակել տուլարեմիայի բավականաչափ բակտերիա:

Հավելյալ տեղեկությունների համար...

Հեռաձայնեցեք CDC-ին (Centers for Disease Control) անգլերեն լեզվով տեղեկություն ստանալու համար.

800-CDC-INFO (800-232-4636)
888-232-6348 (TTY)

Կամ այցելեցեք ինտերնետ հետևյալ հասցեներով.

www.bt.cdc.gov/agent/tularemia
www.dhs.ca.gov/epo